# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 80-Ա**

<<26>> հոկտեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ՝ ԶՈՐԱԿԱՊ, ԱՆԻԱՎԱՆ/ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Զորակապ և Անիավան բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի համապատասխանաբար՝ 1.17426 հեկտար /կադաստրային ծածկագիր՝ 08-073-0044-0049, Վկայական՝ հեկտար և 2.14594 հեկտար /Կադաստրային ծածկագիր՝ 08-012-0106-0002, Վկայական N 17102023-08-0013/ հողամասերը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով վարձակալության տրամադրելու համար:
2. Հաստատել հողամասի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ- 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Է. ՈՒՌՈՒՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<26>> հոկտեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ